

## Ֆ եր դ ու ս ի

## Ա. ԴՐՈՒԱՅ

## Արսաւիր Բաբական

Շուտով վաղեց արքայն ուխտելու արկած,  
 Եւ տեսաւ պատանւոյն մօտ ցիւր պարկած.  
 Ըսաւ ո՛ր Նետով որ այս ցիւն է ինկեր,  
 Պէտք է Նոյն ձեռամբ ալ խնայ նորա Նկեր:  
 Արքային պատահան տըւաւ Արտաշիր  
 Թէ իմ զարկածն է, ե՛ս զարկի այս ցիւ:  
 Արքայորդին պընդեց թէ — Ո՛չ, այլ ե՛ս եմ,  
 Եւ հիմա ընկերին հետքին կը վազեմ:  
 Արտաշիրն ըսաւ. Կա՛ց, առա զայն ազատ  
 Եւ Նետ ու ցիւր այս տեղ անտառ ու առատ.  
 Մի ուրիշ ալ զընա՛ զա՛րկ ասոր նըման,  
 Սուտ խօսիլ չէ վայել պատուոյ տէր մարդկան:  
 Արտաւան ցասմնալից եղաւ այս խօսքին,  
 Երեսն ի վեր արդուն գոռաց զարագին.  
 Ի՛մ է, ի՛մ այս յանցանք, իմ բարուց բերում  
 Որ այդչափ հոգ տարի քեզ, ա՛յ ապառոււ:  
 Ինչո՞ւ պէտք էր տանիլ քեզ ըսպայի հետ,  
 Որս ու խրախճանութիւն եւ հանդիսակէտ.  
 Որպէս զի կպատէիր իմ իսկ զաւակէս  
 Փառք ու պատիւ՝ անուն քաջութեան այսպէս:  
 Գրնա՛ ձերբուս զու հոգ ու զարման տար,  
 Եւ անոնց մօտ մի տեղ բըռնէ քեզ համար,  
 Ախտաւատանիս զու զէտ սալար եղիր,  
 Զը լինի այլոց ու քո մէջտեղ խրտիր:  
 Լեցան Արտաշիրին աչեան այն կէտին,  
 Արաք նըժոյգներու այն դիտապետին:  
 Մի նամակ ուղարկեց իւր մեծ հօր ընդ հուպ,  
 Վրչտաբեկ սրբտիւ ու զըլուին ալեծոփ,  
 Ըսաւ ինչե՛ր հասաւ մեզ Արտաւանէն,  
 Ախտանայ մարմինն ու ցաւք հոգին հանեն:  
 Թէ ո՛ւր էին զացեր եւ թէ Արտաւան  
 Ինչո՞ւ էր սըրտմուտեր, յիշեց ամէն բան:  
 Երբ նամակը հասաւ ձեռքը Բաբակին,  
 Նա ոչինչ չը յայտնեց բընաւ ոչ մէկին.  
 Դէպքը սակաւ սըրտին շատ պատճառեց ցաւ,

Գրնաց գանձատունէն մի քիչ փող բերաւ,  
 Ուղտի վերայ հեծցուց փութով մի դեպպան,  
 Տըւաւ մի բիւր դենար, ուղարկեց մանկան:  
 Նաեւ իսկոյն մօտը կանչեց մի զըպիր,  
 Հրաման ըրաւ զըրել թուղթ առ Արտաշիր.  
 Ո՛վ անխորատ դեռհաս պատանի,  
 Երբ դու որսի ելար հետ Արտաւանի,  
 Ինչո՞ւ առաջն առիր զու նորա մանկան,  
 Նորա ծառան էիր դու, ոչ ազգական.  
 Թըշնամութեամբ չըրաւ նա քեզ ոչ մի չար,  
 Որչափ դու քեզ ըրիր անխորհրդաբար:  
 Հիմա, ախառտ՛ որ սիրուն առնես տակաւ,  
 Հրամանէն չեղլիս դուրս բընաւ ու բընաւ:  
 Ահա քեզ զըրկեցի բաւական զենքը,  
 Մի քանի ալ խըրատ տըլի օգտակար,  
 Նորէն կ'ուղարկեմ փող, երբ վերջացնես,  
 Անցնի նայինք մի քիչ ժամանակ այսպէս:  
 Սուրալով ուղտու վրայ ծեծի ըզգօն ու ծիր  
 Եկաւ հասաւ ուր էր մանուկն Արտաշիր:  
 Սա երբ կարգաց նամակն՝ յոյժ ուրախ եղաւ,  
 Միաքը զըրաւ գրտնիլ մի հընար ու դաւ:  
 Զիանի մօտ ընտրեց մի բընակարան,  
 Թէպէտեւ իրեն չէր արժանի այնքան:  
 Կա՛ւ ու կազմած, ըզգետո՛ խոհանոց չըքեղ,  
 Ամէն ինչ յարդարեց ճոխապէս այնտեղ:  
 Դիւեր ցերեկ նորա գործն էր կեր ու խում  
 Գինի՛ բաժակ՝ նըւազ՝ միակ ըզգաղում:  
 Արտաւան մի պալատ ունէր գեղեցիկ,  
 Ուր կը պահէր խնամով մի սիրուն աղջիկ:  
 Գիւլնար կը կոչուէր այն տիպար լուսնաթոյր,  
 Պատկեր ականաբուռ, բիւրբաւանգ ու բոյր:  
 Արքային համարեա՛ խորհրդաւան էր,  
 Եւ նորա գանձերը նէ կը պահպանէր.  
 Իւր անձն աւելի էր նորա աջերն,  
 Երբոր զայն կը տեսնէր ուրախ էր հոգին:  
 Մի օր աղջիկն ուրախ՝ տեսաւ տանիսէն,  
 Որ Արտաշիր նըստած զըւարթ էր ու չէն:  
 Հայեցաւ ժպտադեղ շուրթերուն նորա,  
 Նա զահ զըրաւ իսկոյն իւր սըրտին վերայ.  
 Ըսպտեց մինչեւ օրն եղաւ մութ իսպառ,  
 Մտեցեւ գիշերը եկաւ խոր խաւար.  
 Պարբային ժանիքէն անցուց մի կտարան,  
 Մի քանի հատ հանգոյց հաստատեց վըրան,  
 Սըզըգեցաւ իջաւ յանգըզնաբար ցած,  
 Գոռութիւն մատոյց առ Բարեբարն Աստուած:

Երբ նազաքայլ եկաւ Արտաշիւրի ջով ,  
 Գոհարաւա՞ մուշկ ու ամբար բուրիւղով .  
 Նորա գլուխը դիպակ բարձէն առաւ վեր  
 Բազկացը մէջ սեղմեց , մինչ նա կը զարթնէր :  
 Պարմանին հայեցաւ պիշ այն գեղունոյն ,  
 Հիասքանչ էր գէմքն ու հերկն ու բոյր ու գոյն :  
 Ըսաւ այն լուսնեկին . — Դու ուստի՞ եկար ,  
 Պարգեւել տուր իմ այս սրբոյն վըշտանար :  
 Աղջիկն ըսաւ . — Ես մի աղաթին եմ խուն ,  
 Սիրտ ու հոգիս համակ քո սիրով գեղուն .  
 Գանձապահն եմ Շահին եւ հարձ մեծագին ,  
 Ինձմով միայն զըւարթ է նորա հոգին :  
 Յետ այսու թէ հաճին ջո ստորուն եմ ես  
 Եւ ինձ այն է կեանք քո տեսնել քո երես :  
 Թէ կամիս կուգամ ես ջո մօտ ամէն օր ,  
 Խաւարըզ փարտեմ , ընեմ յուսաւոր :  
 Մի ժամանակ այսպէս ի գըլուսն հանին ,  
 Մինչեւ խորտակեցաւ անիւ պաշտպանին .  
 Մեռաւ աշխարհափորձն ու արթուն Բարակ ,  
 Ուրիշի թողովով այս հինաւուրց բընակ :  
 Արտաւանին երբ այս գոյմն հասաւ ահանջ ,  
 Տըխրեցաւ յոյժ , մըթնեց սիրտն ալետանջ :  
 Փարսի գահուն տընկեց աչք ամէն մի մեծ ,  
 Բայց Արքայն տըւաւ զայն իւր որդւոյն երէց\* :  
 Հրաման ըրաւ բերին տաւիլն անարի ,  
 Պալատէն դաշտ հանց զօրք քաջարի :  
 Արտաշիւրին խաւար դարձաւ լոյս աշխարհ ,  
 Այն ձեռնառու ըզգոյն ծիրունոյն համար :  
 Արտաւանի սպասէն զըղուած էր նա յոյժ ,  
 Փոխեց իւկոյն իւր միտքն իրա տաւ այս գոյժ ,  
 Ա՛յնչափ դառն եկած էր սըրտին այս կորուստ ,  
 Որ ամէն կողմէ ելք փընտէր ի փախուստ :  
 Թարգմ. ՏՐ. Յ. ԹԻՐԵԱՔԵԱՆ

(Շարունակելի)

## Մ Ո Ւ Ր Ա Տ Ա Չ Ա Տ Ա Չ

Մեծ ուրախութեամբ իմացանք որ հռչակաւոր  
 Լեւոն Հնչակեան գործիչ Մուրադը (Համարձու՞մ

\* Արշակունեաց վերջին շատախղ Արտաւանը Թէյ կը  
 նստէր որ այժմու Թէհրանին մօտերն էր . իսկ Բարակ  
 նորա կողմանէ Փարս նահանգին կուսակալն էր :

Պոյանեան), որ տասներեք տարիէ ի վեր կը  
 չարչարուէր բանտի ու բերդաբազմութեան մէջ ,  
 յաջողեց է փախլիլ օգնութեամբ իր ընկերնե-  
 րուն եւ հասեր է Փարսի : Հին Հնչակեանները  
 արժանի են շնորհաւորութեան իրենց ընկերա-  
 կան պարտականութիւնը այսքան փախլուն կեր-  
 պով կատարած ըլլալուն համար :

Կը խնդրենք Մուրադէն ուշադրութիւն  
 դարձնել հայ յեղափոխական Համաժողովի մը  
 գումարման գաղափարին վրայ , զոր անգամ մը  
 եւս կ'առաջարկենք Անահիթի այս թիւով . իր  
 ալակցութիւնը կարող է մեծապէս նպաստել  
 յաջողմանն այդ գաղափարին , զոր պէնջ օրուան  
 անհրաժեշտութիւններէն մին կը համարինք :

## ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Notre-Dame de Bitlis, texte arménien pu-  
 blié par Frédéric Macler. — Extrait du «Ba-  
 naser». Paris. — Այս գրքիկն մէջ, Պ. Մաք-  
 լէր հրատարակած է՝ հակիրճ մեկնաբանական  
 յոտափարանով մը՝ Փարսիի ազգային Մատենա-  
 դարանին հայերէն ձեռագիրներուն մէկէն քաղ-  
 ուած անսխալ տրգուման մը , որ հետաքրքրա-  
 կան տեղեկութիւններ կուտայ 18րդ դարուն  
 սկիզբը Բաղէի » խնդրակատար Ս. Աստուա-  
 ծածին » եկեղեցւոյն եւ ժամանակակից կարգ  
 մը գէպքերու մասին :

## LES TROUVÈRES ARMÉNIENS

Այս հատոր՝ որ նոր լոյս տեսաւ , կը պա-  
 րտակէ ֆրանսերէն թարգմանութիւնը Հայոց  
 հին եւ նոր աշուղներու լաւագոյն էջերուն , նե-  
 րածութեամբ մը եւ ծանօթագրութիւններով ըն-  
 կերացած , Պարտք կը համարիմ խորին շնորհա-  
 կալութիւնս յայտնել Պողոս Նուպար փաշային ,  
 որու նիւթական ալակցութեան շնորհիւ կրցաւ  
 հրատարակուիլ այս աշխատութիւնը , որ երկու  
 տարիէ ի վեր ձեռագրի վիճակին մէջ կը մնար  
 Գինկ փափաղողները պէտք է դիմեն Librairie  
 du Mercur de France, 26 rue de Condé,  
 Paris. Գին 3 ֆր. 50 .

Le Gérant : FRÉDÉRIC MACLER

Imp. D. DOGHAMADJIAN  
 18, Rue des Gobelins, Paris.